№ 48 Մարտի 20 (Apրիլի 1) 1882 Մարտի 20 (Apրիլի 1) № 48

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ախալցխայից։ Նամակ Մեծ-Ղարաքլիսից։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Անգլիա։ Յունաստան։ Թիւրքիա։ Սերբիա։ Բրեդլօ իր ընտրողների առաջ։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՅԻՑ

Մարտի 15-ին

«Մշակի» 40-րդ համարում Վ. Գ. ստորագրութեամբ Ախալցխայից տպված նամակը վատ տպաւորութիւն գործեց ընթերցող հասարակութեան և մանաւանդ ուսուցչական խմբի վրա։

Պ. նամակագիրը նորընծայ հոգաբարձուց մասին խօսելով՝ ուրախութիւն էր յայտնել, որ վերջապէս հասարակութիւնը հասկացել է հոգաբարձութեան նշանակութիւնը և այդ կոչման յարմաւոր անձանց գնահատութիւնը, և որ առաջին անգամն է որ մեզանում ընտրվում է հոգաբարձու համալսարանական մարդ։ Բայց ինչ կասէ նա, եթէ մենք հարցնենք՝ թէ արդեօք մենք որքան համալսարանականներ ունեցել ենք Ախալցխայում, որոնց չենք գնահատել, և թէ նրան յիշեցնենք որ միակ համալսարանական պ. բժ. Ղազարեանցը մեզանում չարունակ մի քանի տարի հոգաբարձու էր մինչև որ Ղարս տեղափոխվեցաւ, և թէ այժմ ունենք մի այլ համալսարանական, որին չենք գնահատում։ Ուրեմն ինչից ըստացված պարոնը այդպիսի վստահութեամբ զրպարտում է հասարակութիւնը, որը միշտ գնահատել է իւրաքանչիւր մարդու արժանաւորութիւնը և գնահատում է։ Մենք շատ չնորհակալ ենք նորանից, որ միշտ արիւն հսկում է ամեն հասարակական գործերին, նա մանաւանդ այս լուսաւորութեան գործին՝ տալով միշտ ուսումնարաններին հասկացող և գործունեայ հոգաբարձուներ, ինչպէս են և այս նորընծայ հոգաբարձուները։

Պ. Թղթակիցը ասում է. «Հաւատի ենք, որ մեծ. Մոթաֆեանցը և ընկերակիցները միախորհուրդ կաշխատեն կանգնեցնել մեր քայքայված ուսումնարանները, որոնք շատ տգէտ-տիրացու ուսուցիչների պատճառով տխուր պատկեր են ներկայացնում և բարեմաղթում ենք, որ Աստուած հին հոգաբարձուց կուսակցական ոգին սրանցից հեռու պահէ, որ կարողանան գնահատել արժանաւոր ուսուցիչներին և հեռացնել տիրացուներին, որոնք հների կողմնապահութեան չնորհիւ մեր ուսումնարանները հիւանդանոց են դարձրել։»

Նախ և առաջ պէտք է ասել, որ պ. Թղթակիցը մեծ իրաւունք է տուել պ. պ. հոգաբարձուներին. եթէ իսկապէս ցանկանում է նա ուսումնարանների առաջադիմութիւնը և հոգաբարձուց միջից կուսակցական ոգու վերնալը՝ վերոյիշեալ իրաւունքից պէտք էր ազատ պահել նորանց. որովհետև մենք փորձով համոզված ենք, որ քանի որ թեմական վարչութիւնը չը կար, ուսումնարանների բոլոր իրաւունքները նրանց ձեռքն էր. ուստի եթէ Մարկոսը հոգաբարձու ընտրվէր, Թորոսին ուսուցիչ կը նշանակէր, իսկ Թորոսը Կիրակոսին. և եթէ ուսուցիչներից մէկը սրանց մէկի կամ միւսի կամացը հակառակ էր, իսկոյն կարտաքսվէր ուսումնարանից և այսպիսով առաջարը ամիսը 3—4 ուսուցիչ կը փոխվէր։ Կարծեմ որ առողջ մտքի տէր մարդը չը պէտք է ցանկայ այդ տխուր երևոյթի կրկնվելը։

Պ. պ. հոգաբարձուներին գործի համար ուրիշ ասպարէզ կայ. ա) Կարապետեան ուսումնարանը իր հնութեամբ, անյարմար և նեղ դասարաններով ներկայացնում է անասունների մի բնակարան, որը, եթէ չմնալու չը լինեն, կարող է մի օր որը, եթէ չմնալու չը լինեն, կարող է մի օր փուլ գալ և տակով անել միջիններին։ բ) Իրաքանչիւր պատրաստական դասարանում նստում են մօտաւորապէս 80 աշակերտ, որանց հետ պարապելը եթէ չասեմ անկարելի է, գոնէ շատ դժուար է, և գ) Հարիւրաւոր մանուկներ զրկվում են ուսումից, ուսումնարաններում տեղ չը լինելու պատճառով, և այլն և այլն։

Ուրեմն մենք յոյս ունենք որ նորընտիր հոգաբարձութիւնը վարչութեան հետ փոխանակ վիճելու այս և այն ուսուցչի մասին՝ ուշադրութիւն կը դարձնէ վերոյիշեալ կէտերին, որոնց իրագործումը անհրաժեշտ է։

Երկրորդ՝ մեր ուսուցիչների մէջ տգէտ տիրացուներ չը կան, որոնք անհամապատասխան լինէին այդ պաշտօնին և չը կան այնպիսիներ, որոնք հին հոգաբարձուց չնորհիւ նշանակված լինէին։ Նորանց բոլորին նշանակել է վարչութիւնը, որը կարծեմ, աւելի ընդունակ է ուսուցչի արժէքը հասկանալու, քան թէ նոյն իսկ Վ. Գ. Ն. յիրաւի, ինչն է ստիպում Թղթակցին անպատուել ուսուցիչներին։ Այս տարին առանց դրան էլ նրանց համար մի սև տարի էր. փող չը լինելու պատճառով նրանք չարունակ 6 ամիս ռոճիկ չը ստացան և համարեա ամբողջ ձմեռը անվառ դասարաններում դաս խօսեցան և շատ նեղութիւններ կրեցին. ուրեմն այդ էր նրանց վարձատրութիւնը։ Զը նայելով, որ վարչութիւնը նրանց արժանաւոր է համարել, այնու ամենայնիւ ուսուցիչները միշտ կրկնում են թէ ուրախութեամբ կը հեռանան պաշտօններից, եթէ նորանցից արժանաւորը գտնվի այդ պաշտօնի համար։ Հէնց այդպէս էլ վարվում է և վարչութիւնը. եթէ մինը անարժան է, կը հեռացնէ՝ նշանակելով նրա տեղը մի ուրիշին։ Եթէ պ. Թղթակիցը աւելի արժանաւորների տեղը գիտէ, թող ցոյց տայ վարչութեանը, որը ուրախութեամբ կընդունէ նրանց. և եթէ ինքը Թղթակիցը ուզում է ուսուցիչ դառնալ, թող ուղղակի դիմէ վարչութեանը, եթէ ունի արժանաւորութիւն և վստահութիւն։

Բայց այստեղ մի միւթարական կէտ կայ. մարդուն համեմատ կշիռ կունենան և նրա խօսքերը։ Պէտք է ասել, որ կան մեզանում անգործ մարդիկ, որոնք հաց հայթայթելու համար ամեն անաղնիւ միջոցների են դիմում։ Մենք յիշում ենք, որ ինչպէս մի քանի ամիս առաջ մի պարոն յարձակվել էր Աբրահամ քահանայ Ղազարեանցի վրա, որը նրան հոգևոր կառավարութեան մէջ զրպարտութեան պաշտօն խնդրելիս բացասել էր։ Արդեօք այդ միջոցով նա ինչ նպատակի հասաւ, եթէ ոչ մի վայելուչ պատասխանի արժանացաւ։ Այժմս ամեն տեղից յոյսը կտրած շատերը ուզում են ուսուցիչ դառնալ, և այդ պատճառով հարկաւոր է հոգաբարձուներին չողոքորթել և ուսուցիչներին տգէտ տիրացուներ անուանել։ Բայց թող լաւ գիտենան, որ ոչ վարչութիւնը և ոչ հոգաբարձութիւնը երբէք այդպիսի խռովայոյզ մարդկանց թոյլ չեն տայ մտնել մեր ուսումնարաններում։ Թող ուրիշ դուռ բաղխեն։

* * *

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՂԱՐԱՔԻԼԻՍԻՑ

Մարտի 14-ին

Մեծ պասը իր թևերը սփռել է բարեպաշտ ժողովրդի վրա։ Մեր ժողովուրդը խորին ջերմեռանդութեամբ հնազանդվում է այդ օրէնքին։ Նա ամենայն զգուանքով, այս բոպէիս, գարշում է կաթնից, ձուից.... որովհետև պաս է, հոգիները դժոխքը կը գնան։ Բայց ամենայն ախորժակով մէնը մսից զզվանում է, իր զրացու ընտանեկան պատիւը արատաւորում է, սրա նրա ոտքի տակ ծածուկ սապոն է դնում ու յանկարծ անդունդի մէջ է գլորում, ամեն տեսակ խարդախութիւն և չարագործութիւն առանց ամաչելու գործում է, որովհետև պաս չեն այսպիսի բաները։ Այո, կաթ խմելը զարհուրելի մեղք է—պաս է, բայց անմեղների փողը ուրանալը պաս չէ։ Ձու ուտելը պաս է, բայց ձի գողանալը՝ պաս չէ։

Մեծ պաս մտած օրից մինչև հիմայ հայը խոնջանքի երեք անգամ թղթախաղի դէմ քարոզ է կարդացել եկեղեցում, բացատրելով աշխատասիրութեան, ծուլութեան, խնայողութեան, ժլատութեան և շռայլութեան լաւ և վատ հետևանքները։ Տէր հայրը, թողած ճգնաւորների, սատանաների փոտած պատմութիւնները և դժոխքի սարսափելի նկարագրութիւնը, իր քարոզների նիւթ չունում է ժողովրդի առօրեայ կեանքը, նրա կեցութեան ձևերը և առհասարակ պատմում է դալիս ժողովրդի կեանքի չրջանակի մէջ, խօսում է առողջապահական անհրաժեշտ պայմանների մասին, հասկացնում է՝ թէ հասարակութիւն կառավարողները ինչ տեսակ մարդիկ պէտք է լինեն և ինչպէս պիտի կառավարեն։ Բայց թող ների ինձ տէր հայրը, որ իր քարոզները, զրված լինելով բոլորովին ուսումնական լեզուով, փարթամ ոճերով, գրաբար խօսքերով, ամենևին հասկանալի չէին մեր անդրագէտ ամբոխի համար։ Իսկ վերջին քարոզը, որ բոլորովին տեղական բարբառով էր գրված, շատ գեղեցիկ էր և շատ լաւ տպաւորութիւն թողեց ամբոխի վրա և բոլորն էլ ուրախ ուրախ կրկնում էին «այ քարոզ, ինչ ասեմ, ըսօր օր լաւ բան հասկացանք....» Միշտ ժողովրդի լեզուով պիտի խօսել ժողովրդի հետ։

«Մշակի» № 39-ի մէջ Ղարաքիլիսի լրատուն հիւանդութեան մասին խօսելով դարձեալ լուն, ուզում է չմնել։ «Համարեա տուն չը կայ, ուր գոնէ մի հիւանդ չը լինի. մեռնում են օրական 3-ը—4-ը. մեռնում են և հասակ առածները» ասում է պ. լրատուն։ Բայց ես անձամբ տեղեկանալով, պաշտօնական ցուցակից ստուգելով, և եկեղեցու չափաբերականը կարդալով, գտաւ բերեցի որ ամբողջ գիւղում հազիւ 50 տուն հիւանդ կայ։ Հասակաւոր մարդ ամենևին չէ մեռել։ Եթէ լրատուն ասելով՝ օրական 3 հոգի մեռած լինէին, (այդ հիւանդութիւնը սկսվել է բարեկենդանների վերջին շաբթում) ուրեմն՝ մինչև ցայսօր, առ նուազը, մեռած պիտի լինէին 100 հոգի, բայց, ինչպէս ցոյց է տալիս չափաբերականը, մեռել են 21 հոգի, այն էլ 1—8 տարեկան մանուկներ։ 260 տան համար, այսպիսի կարճ ժամանակում, այդքան երեխայից զրկվելը որպէս թէ շատ չնչին բան է, մի կողմից էլ պ. լրատուն մեկին 10-ը ասելացրել է։ Ես չը գիտեմ ինչն է ստիպում մեր լրատուներին անպատճառ չափազանցացնել, անպատճառ սուտը խառնել և առանց ճիշդը իմանալու, վայր ի վերոյ գրել։

Գաւառական բժիշկ Գուլբինսկին Ալէքսանդրապօլից եկաւ Ղարաքիլիսա, ման եկաւ տները, տեսաւ հիւանդ մանուկներին և կարևոր խորհուրդներ տուեց ժողովրդին և մերձակայ գիւղերը գնաց այցելելու։ Պ. բժիշկը հասկացրեց որ այդ տեսակ հիւանդների համար մաքուր օդ, մաքուր ջուր և առհասարակ մաքրութիւն է հարկաւոր։ Բայց տարաբաղդաբար իւրաքանչիւր կտուր ու դուռ տաւարի դարչահոտ աղբի մէջ կորած է. խմելու ջուրը ամենազզուելի աղբերով թունաւորված է։

Ղարաքիլիսի փողոցների գործը, որ ձմեռվայ ցրտերի պատճառով դադարել էր, պ. Փիրումեանցի չնորհիւ դարձեալ սկսվեց։ Ճշմարտութիւնը պահանջում է ասել, որ այս գործում, թէ տաքանջում է ասել, որ այս գործում, թէ տաքանջում է ասել, որ այս գործում, թէ տաք

քրքրողները ա, բ և գ լինելով կաշխատենք մի ուրիշ անգամ յայտնել դոցա մասին մեր կարծիքը:

Գ. Քալանթարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Моск. Телеграфъ» լրագրի մէջ կարդում ենք. Պետերբուրգից Բերլինի լրագիրներին հաղորդում են, որ իբր թէ ռուսաց կառավարութիւնը ցանկանում է մէկ միլիարդ ֆրանկի փոխառութիւն անել Փարիզում:

—

Այսօրվայ հեռագիրը հաղորդում է որ բարձր Նիկոլայի տեղ, նշանակված է ռուսաց ազգային լուսաւորութեան մինիստր Դելիանով: Մեր ընթերցողներին երևի հետաքրքիր կը լինի իմանալ որ Դելիանով հայ է:

—

Մարտի 18-ին պ. Ներսիսեան տուեց իր ներկայացումը Արծրունու թատրոնում: Ժողովուրդը բազմաթիւ չէր: Պարոն Ներսիսեանի առած փորձերը շատ հետաքրքիր էին, միայն ափսոս որ նրա խօսածը պ. Արտաշէս Սուքեասեանց չը կարողացաւ ճշդութեամբ թարգմանել ռուսերէն լեզուով հայերէն չը հասկացողների համար:

—

Մեզ գրում են ՁԱԼԱԼՕՂԼՈՒՑ: «Մեր կողմերի գիւղերում աղջիկները պսակվելով տղաների հետ, իրանց հետ օժիտ կամ բաժինք չեն բերում իրանց ամուսնուն, այլ ընդհակառակն, տղան պէտք է բաւական փող վճարէ աղջկայ հօրը, որպէս զի պսակվի աղջկայ հետ: Մի աղջկայ հետ պսակվել ցանկացող տղաներից ով որ աւելի փող կը տայ, նա է ստանում աղջկայ ձեռքը: Հայրը մի տեսակ առուրդ է անում. պատահում է որ սակարկութիւնը սկսվում է 200 կամ 300 բուբլուց և հասնում է մինչև 500 բուբլի: Այդ պատճառով գիւղերում հայրերը միշտ ցանկանում են աղջիկ զաւակներ ունենալ և ոչ թէ տղաներ, քանի որ աղջիկները նրանց համար մի տեսակ հարստութեան աղբիւր են լինում: Այրի կանանց հետ էլ պսակվելու ցանկացողները պէտք է մի յայտնի գին վճարեն նրա սկեսրայրին:»

—

«Голосъ» լրագրում կարդում ենք հետևեալը. «Народная Школа» ամսագրի մարտի տետրակում Ե. Տ. Միխայլովսկի մանրամասնաբար քննում է նորերումս արտասահմանում յարուցված այն խնդրի դրութիւնը, որը պահանջում է ընդհանուր կրթութիւնը միացնելու արհեստների հետ սկզբնական ժողովրդական ուսումնարանների դասընթացքում կամ Շվեդիայում և Գերմանիայում եղած այդպէս անուանված գործաւորների ուսումնարաններում: Որովհետև մեզանումն էլ շատերը կան, որոնք քարոզում են, որ Ռուսաստանումն էլ այդ տեսակ ուսումնարաններ մտցնվին, և իրանց պատճառաբանութիւնների մէջ, յաճախ Արևմտեան Եւրոպան են օրինակ բերում, ուրեմն հետաքրքրութիւնից զուրկ չի լինի ծանօթանալ այն եզրակացութիւնների հետ, որ պ. Միխայլովսկին հասել է այդ հարցի վերաբերութեամբ իր յօդուածի մէջ, բազմաթիւ փաստերի հիման վրա: Ահա թէ ինչ է ասում նա իր յօդուածի վերջում: «Բոլոր մեր ասածները մէկ յայտարարի բերելով, կը ստանանք, որ սկզբնական ժողովրդական ուսումնարանում ընդհանուր կրթութիւնը արհեստների հետ միացնելու մասին խնդիրը ոչ միայն Գերմանիայում, այլ և նրա ծննդեան տեղում, Սկանդինավիայում մինչև այժմ վերջնականապէս չէ վճռված. որ այդպէս անուանված «գործաւորների ուսումնարանների» մասին հասկացողութիւնը այնքան մութն է հէնց Շվեդիայում, որ շվեդները չը գիտեն դեռևս, թէ ինչ ընտրութիւն յատկացնեն նրանց. որ այդ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մասնաւոր անձանց ձեռքով կառարված մէկ փորձ, և այն էլ ոչ թէ գիւղերում, այլ քաղաքներում—մէկ այնպիսի հանգամանք, որն նոյնպէս մեծ նշանակութիւն ունի. որ Գէօտէբօրգում բացված «գործաւորների» ուսումնարանները ոչնչով չեն զանազանվում նրանցից, որոնք Արևմտեան Եւրոպայում մի մի տեղ գտնվում էին առաջ, բայց որոնք հակամանկավարժական լինելով, փոխվեցան. որ, վերջապէս Գերմանիայում, որ աւելի մանկավարժական աշխարհ է, գործաւորների ուսումնարանների դէմ կանգնեցին կառավարութիւնները, մանկավարժական և մինչև անգամ արհեստաւորական ընկերութիւնները, այդ տեսակ հիմնարկութիւնները սկզբնա-ժողովրդական կրթութեան գործի համար աւելի վնասակար համարելով, քան թէ օգտակար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Գլադստոնի մինիստրութիւնը, գրում է „Голосъ“ լրագիրը, վճռողականապէս պահանջում է համայնքների ժողովի կանոնագրութեան փոփոխելը: Մարկիզ Հարտինգտոն, երևի Գլադստոնի բացակայութեան պատճառով, յայտնեց համայնքների ժողովին, թէ անկարելի է կառավարել երկիրը այժմեան պարլամենտական կարգերի օգնութեամբ, որոնք միջոց են տալիս ընդդիմադրականներին արգելք դնել կառավարութեան գործունէութեանը: Մինիստրութեան կարծիքով առաջարկված փոփոխութիւնները համայնքների ժողովի կանոնագրութեան մէջ անպայման անհրաժեշտ են: Եթէ համայնքների ժողովը համաձայն չէ այդ կարծիքի հետ և նրա մէջ կը գտնվեն այնպիսի գործիչներ, որոնք կարող են երկիրը կառավարել այժմեան պայմաններով, մինիստրութիւնը հրաժարական կը տայ և ուրախութեամբ կը զիջանէ իր տեղը այդ գործիչներին:

Մարկիզ Հարտինգտոնի այդ յայտնութիւնից երևում է, որ համայնքների ժողովի կանոնագրութեան փոփոխութենից կախված է մինիստրութեան գոյութիւնը: Գլադստոն և նրա ընկերները ուղղակի յայտնում են, որ համայնքների ժողովի մեծամասնութիւնը պէտք է ընդունէ կամ կառավարութեան առաջարկած փոփոխութիւնները կանոնագրութեան մէջ, կամ նրա հրաժարականը:

Մենք հաւատացած ենք, որ այդ յայտնութիւնը բաւական է կանոնագրութիւնը մինիստրութեան ցանկութեան համեմատ փոփոխելու համար: Մարկիզ Հարտինգտոն 'ի հարկէ գիտէր, թէ ի՞նչ է ասում, առաջարկելով մինիստրութիւնը յանձնել համայնքների ժողովի այնպիսի գործիչներին, որոնք կարող են կառավարել երկիրը պարլամենտական այժմեան պայմաններով: Այդպիսի գործիչներ չեն գտնվի ոչ ազատամիտ մեծամասնութեան անդամների և ոչ պահպանողական փոքրամասնութեան անդամների մէջ: Փորձը ցոյց տուեց, որ պարլամենտական կանոնագրութիւնը միջոց է տալիս համայնքների ժողովի մի փոքրիկ կուսակցութեան անգամ որ և է հարցի քննութիւնը ցանկացածի չափ երկարացնել, ինչպէս այդ արին իրլանդացի ավտոնոմիստները: Այդ միջոցը երկայրի սուր է և նրանից կարող է օգուտ քաղել ժողովի ամենափոքրիկ կուսակցութիւնն անգամ կառավարութեանը վնասելու համար: Այդպիսի կարգերին պէտք էր վերջ դնել և զանազան կուսակցութիւնները չեն կարող չը համաձայնվել կառավարութեան հետ: Համայնքների ժողովի կանոնագրութիւնը այնպէս կը փոփոխվի, որ այլ ևս չը կրկնվեն այն ցաւալի դէպքերը, որոնք վնասեցին անգլիական պարլամենտական կարգերի հեղինակութեանը թէ անգլիական ժողովրդի և թէ Եւրոպայի առաջ:

Փոքրամասնութեան իրաւունքների յարգելը անկասկած շատ գովելի է, բայց անգլիական պարլամենտի մէջ այդ յարգանքը այնպիսի չափերի է հասցրած, որ նա անվնաս է միայն այն ժամանակ, երբ փոքրամասնութիւնը չէ կամենում 'ի չարն գործ դնել իր իրաւունքը: Իւրաքանչիւր օրէնսդրական ժողովի մեծամասնութիւնը պէտք է միջոց ունենայ յաղթել փոքրամասնութեան ընդդիմադրութեանը, հակառակ դէպքում միտք չի ունենայ օրէնսդրական հարցերի վճռելը ձայների մեծամասնութեամբ:

Այդ բոլորը շատ լաւ յայտնի է Եւրոպայի օրէնսդրական ժողովներին, որոնց կանոնագրութիւնները միջոց են տալիս մեծամասնութեանը վերջ դնել այն վիճաբանութիւններին, որոնց փոքրամասնութիւնը դիտամբ երկարացնում է: Անգլիական պարլամենտի կանոնագրութիւնը չափազանց է պաշտպանում փոքրամասնութեան երաւունքները և ձայների մեծ բազմութիւն է պահանջում դիտամբ երկարացրած վիճաբանութիւններին վերջ դնելու համար: Կառավարութեան առաջարկած փոփոխութիւնների նպատակն է այդ անյարմարութեան ոչնչացնելը: Ինչպէս վերևը ասացինք, համայնքների ժողովը երևի կրմբռնի այդ փոփոխութիւնների անհրաժեշտութիւնը և գործը այն տեղը չի հասցնի, որ այժմեան մինիստրութիւնը հրաժարական տայ:

ՅՈՒՆԱՍՏԱՆ

„Polit Corresp“ լրագրին մարտի 17-ից հաղորդում են Աթէնքից: Յունական նոր մինիստր-նախագահ Տրիկուպիս յունական պատգամաւորների ժողովի առաջ բացատրեց կառավարական նախագիծը: Տրիկուպիս իր ճառով հաւատացնում էր պատգամաւորների ժողովին, որ նա իրանից կախված բոլոր միջոցներով կաշխատի բարեկամական յարաբերութիւններ պահպանել բոլոր պետութիւնների հետ և մանաւանդ դրացի պետութեան հետ: Այնու ամենայնիւ կառավարութիւնը, ի նկատի առնելով զանազան պատահարներ, իր պարտականութիւնն է համարում մեծացնել երկրի պաշտպանողական ոյժերը և, եթէ հարկաւոր լինի, նա պատրաստ է նորից կազմակերպել յունական զօրքերը և պատերազմական նաւատորմը: Քաղաքական դրութիւնը արևելքում Տրիկուպիս մեայլ անուանեց, իսկ Յունաստանի սահմանները անբաւարար: Տրիկուպիս մատնեց ոչնչացնել այն բոլոր կարգադրութիւնները, որոնց հիման վրա մինչև այժմ կառավարվում էին Յունաստանի հետ միացրած նահանգները: Տրիկուպիսի կառավարութիւնը կը ներկայացնի պատգամաւորների ժողովին Կ. Պոլսի դաշնագրութիւնը և օրէնքների այն ժողովածուն, որի հիման վրա ենթադրված է կառավարել յունական նոր նահանգները: Յունական նոր դեսպաններ կը նշանակվին Լոնդոնի, Փարիզի և Ս. Պետերբուրգի մէջ:

ԹՈՒՐՔԻԱ

Կ. Պոլսից „Polit. Corresp.“ լրագրին գրում են մարտի 16-ից հետևեալը: Ռուսաստանի պատերազմական ծախսերը վճարելու մասին բանակցութիւնները այնպիսի դժուարութիւններ ծագեցրին, որոնք կարող են վերջանալ կամ սուլթանի դիկտատուրայով, կամ Բ. Դրան վերակազմութեամբ Եւրոպական մինիստրութիւնների ձևով: Թիւրքաց գահը բարձրանալուց յետոյ սուլթան Աբդուլ-Համիդ մեծ վիզիրի պաշտօնը կարգով յանձնեց այն բոլոր անձանց, որոնք վարել են այդ պաշտօնը սուլթան Աբդուլ-Ազիզի ժամանակ, բայց շուտով նա համոզվեցաւ, որ այդ մարդիկ չեն հասկացել թիւրքիայի քաղաքական դրութեան փոփոխվելը, որովհետև նրանք, իմանալով, թէ արեւմտեան պետութիւնները միայն իրանց սեփական շահերով են զբաղված թիւրքիայի մէջ, այնու ամենայնիւ պնդում էին դաշնակցութիւն կապել արևմտեան պետութիւնների հետ: Երբ յայտնվեցաւ այդ մարդկերանց անընդունակութիւնը, սուլթանը ցանկացաւ հետևել մի նոր քաղաքականութեանը, որ հիմնվէր միջին եւրոպական պետութիւնների օգնութեան վրա: Սուլթանը իր բարեկամների և խորհրդատուների մէջ ոչ մի մարդ չը գտաւ, որ պատրաստականութիւն յայտնէր կամ ընդունակ լինէր իրագործել սուլթանի ցանկութիւնը: Բայց որովհետև սուլթանը չէր էլ մտածում հրաժարվել իր դիտաւորութենից, ուստի վճռեց անձամբ կառավարել արտաքին քաղաքականութիւնը և Բ. Դուռը գործադրել իբրև գործիք: Իր կարգադրութիւններից շատերը սուլթանը մինչև անգամ ծածուկ պահեց Բ. Դռնից: Սուլթանը չը յայտնեց Բ. Դրանը Գերվիշ-փաշային տուած հրահանգները Ջերնօգօրիայի և ալբանական միութեան մասին, այն հրամանները, որոնց ստացաւ Ալի-Ֆուադ-բէյ Եգիպտոս գնալու ժամանակ, նոյնպէս և Ալի-Նիզամի-փաշային տուած հրահանգները Բերլին գնալու ժամանակ: Սայիդ-փաշա չէր կարող անտարբեր մնալ դէպի իր գործունէութեան այդպիսի սահմանափակումը: Այդ պատճառով նա երկու անգամ խնդրեց սուլթանից հրաժարեցնել իրան պաշտօնից, ասելով, թէ սուլթանը այլ ևս իրան հաւատ չէ ընծայում: Ասիմ-փաշա, որի գործունէութիւնը սահմանափակված էր պալատից նրան ուղարկված գօկումենտների ստորագրութեամբ, նոյնպէս հրաժարական տուեց: Այդ դրութիւնը չափազանց լարված էր, երբ Բ. Դուռը ներկայացրեց սուլթանի հաստատմանը ռուսաց դեսպան Նելիկովի հետ կայացրած համաձայնութիւնը Ռուսաստանի պատերազմական ծախսերը հատուցանելու մասին: Սայիդ և Ասիմ փաշաները վեց շաբաթ շարունակ պնդում էին, որ սուլթանը մի իրագէ հրատարակէ այդ առարկայի մասին, բայց յանկարծ սուլթանը ուղղակի բանակցութիւններ սկսեց ռուսաց դեսպանի հետ և մի նոր համաձայնութիւն կայացրեց: Այդ համաձայնութեան պայմանները ձևի համար ուղարկվեցան Բ. Դրանը խմբագրելու համար: Սայիդ-փաշան յայտնեց սուլթանին, որ Բ. Դուռը նշանակութիւն չի ունենայ եւրոպական դիպլոմատների մօտ և կը կորցնի նրանց յարգանքը, եթէ բանակցութիւնները կը կատարվին առանց Դրան մասնակցութեան: Ներկայումս գործը այս դրութեան մէջ է: Սուլթանը կամ կը հրաժարվի արտաքին քաղաքականութիւնը անձամբ ղեկավարելուց, կամ բոլորովին կը ոչնչացնի Բ. Դուռը, որի իշխանութիւնը այժմ ձևական է: Սուլթանը համոզված է, որ միայն իշխանութեան կենտրոնացնելը Թիւրքիայում կարող է աջող հետևանքներ ունենալ: Եւրոպական դեսպաններին յայտնի է, որ Բ. Դուռը վաղուց կորցրել է իր ազդեցութիւնը պալատի վրա:

ՍԵՐԲԻԱ

Բէլգրադից „Polit. Corresp.“ լրագրին հաղորդում են հետևեալը: Սերբիական սկուպչինայի մարտի 17-ի նիստին առաջարկվեցաւ սկուպչինայի արմատական 51 անդամների յայտնութիւնը, որ նրանք հրաժարվում են պատգամաւոր լինելուց: Երբ արմատական կուսակցութեան անդամները դուրս եկան սկուպչինայից, մի սոցիալիստ պատգամաւոր առաջարկեց արձակել սկուպչինան, որովհետև նա այլ ևս անկարող է վճիռներ կայացնել օրէնքով պահանջված ձայների մեծամասնութեամբ: Սկուպչինայի նախագահը պահանջեց, որ իրան իրաւունք տրվի պատգամաւոր չը համարել նրանց, որոնք առանց օրինաւոր պատճառի ներկայ չեն գտնվի նիստերին և նոր ընտրութիւն-

ներ նշանակել ազատ տեղերը լրացնելու համար: Այնուհետև ազատամիտ վեց պատգամաւորներ նոյնպէս յայտնեցին, որ իրանք էլ հրաժարվում են պատգամաւոր լինելուց:

Այդպիսով հրաժարված պատգամաւորների թիւը հասնում է 57-ի, որոնց փոխարինելու համար անյապաղ կը նշանակվին լրացուցիչ ընտրութիւններ: Մինչև այդ ընտրութիւնների վերջանալը սկուպչինայի նիստերը յետաձգված են: Սերբիական կառավարութիւնը յոյս ունի շուտով վերջացնել սկսած բանակցութիւնները Սերբիայի մէջ երկաթուղիներ կառուցանելու մասին:

„Սերբիական անկախութիւն“ լրագիրը մարտի 13-ից հաղորդում է, որ լուսաւորութեան և հոգևոր գործերի մինիստր Նովակովիչ մի օրինագիծ ներկայացրեց սկուպչինային, որի նպատակն է կանոնաւորել եկեղեցու և պետութեան յարաբերութիւնները: Այդ օրինագծի համեմատ եկեղեցական իշխանութիւնը կատարելապէս կախված կը լինի կառավարութենից: Հոգևոր բարձր իշխանութիւնը սինոդի ձեռքին կը լինի, որին կը մասնակցեն առաջնորդը և թեմական գործակալները: Միտրոպոլիտը կը նշանակվի մի մանաժողովից, որին կը մասնակցեն մինիստր-նախագահ, եպիսկոպոսների սինոդը, հոգևոր գործերի մինիստրը, գլխաւոր դատարանների նախագահները և սկուպչինայի երեք անդամները: Եպիսկոպոսներին միտրոպոլիտը կընտրէ, իսկ գործակալներին թագաւորը կը նշանակէ երեք տարի ժամանակով:

ԲՐԵԳԼՕ ԻՐ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԱՌԱՋ

Լոնդոնից ստացված լուրերի համեմատ Բրեգլօ, հաւատարիմ մնալով իր խոստմանը, մարտի 17-ին ցօուն-Հօլ դահլիճի մէջ ներկայացաւ Նորդսդեմպտոնի իր ընտրողներին և առաջարկեց հրաժարվել պատգամաւոր լինելուց, եթէ նրանք այդ կը ցանկանան: Բրեգլօին մեծ ոգևորութեամբ ընդունեցին նրա ընտրողները և ոչ թէ միայն չընդունեցին նրա առաջարկութիւնը պատգամաւորութենից հրաժարվելու մասին, այլ ընդհակառակը մի վճիռ կայացրին, որով համայնքների ժողովի մարտի 6-ի որոշումը Նորդսդեպտոնի պատգամաւորին համայնքների ժողովից հեռացնելու մասին ապօրինի և ընտրողների իրաւունքը խանգարող է յայտնում: Որոշված է այդ վճռի մի օրինակը համայնքների ժողովին ներկայացնել և մի խնդրագիր ուղարկել, որ պահանջում է թոյլ տալ ընտրողներին համայնքների ժողովի առաջ պաշտպանել իրանց պատգամաւորի իրաւունքները, որի ընտրութիւնը օրինաւոր և կանոնաւոր է: Բացի այդ մի վճիռ է կայացրած, որով հրաւիրում է ամբողջ երկրի ընտրողներին բողոքել համայնքների ժողովի անիրաւացի վարմունքի դէմ Բրեգլօի և նրա ընտրողների հետ: Այնուհետև խօսեց Բրեգլօ: Նա շնորհակալութիւն յայտնեց իր ընտրողների պաշտպանութեան համար և իբրև հետաքրքիր մասամասնութիւն առաջ բերեց այդ լրողութիւնը, որ այն օրը, երբ ժողովը նրա ընտրութիւնը չը վաւերացրեց և նա ստիպված էր ներկայանալ իր ընտրողներին նորից ընտրվելու համար, նա ընդամենը հինգ ֆունտ ստերլինգ դրամ ունէր: Եթէ խղճի ազատութեան բարեկամները նրան չօգնէին, նա չէր կարող վճարել մինչև անգամ տասանորդը այն ծախսերի, որոնք անհրաժեշտ են ընտրութեան ժամանակ: Նա աւելացրեց, որ չը կամենալով ի չարն գործ դնել հասարակութեան առատաձեռնութիւնը, այլ ես նոր ընտրութիւններ չի պահանջի, բայց բոլոր միջոցներ գործ կը դնի համայնքների ժողովը մտնելու համար: Նա կը դիմէ մինչև անգամ բռնի միջոցների և այդ բանը մարտի 6-ից մինչև այժմ չէ արել, որովհետև ամենից առաջ կամենում էր իր ընտրողների համաձայնութիւնը ստանալ: Վերջը նա յայտնեց, որ Անգլիայի բոլոր մեծ քաղաքներում ժողովներ կը կազմվեն համայնքների ժողովի վարմունքի դէմ բողոքելու համար: Բրեգլօի ճառը ծափահարութիւններով ընդունվեցաւ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լուի Բլան հիւանդութեան պատճառով, հրաժարվում է ծայրայեղ ձախակողմեաններին առաջնորդելուց:

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ սենատը մարտի 16-ին ընդունեց պարտաւորեցուցիչ սկզբնական ուսման մասին օրէնքի 3 և 4-դ պարագրաֆները: Վերջին պարագրաֆը որոշում է սկզբունքով սկզբնական ուսման պարտաւորեցուցիչ լինելը:

—«Köln. Zeitung»-ի խմբագրութիւնը մէկ նոր լրագիր հիմնեց Էլզաս և Լոթարինգիան գերմանացնելու նպատակով: Այդ լրագրի անունն է «Strasbourg. Post», որը եկող ապրիլի 1-ից կը սկսվի հրատարակվել:

—Լրագիրներին հեռագրում են, մարտի 7-ից, որ կոմս Վալդերզէյն բանակցում է Ֆրէյցինէի հետ Գոնտայի հարցի առիթով և վաղը ուղևորվում է Բերլին: Բօսնիան և Հերցեգովինան Աւստրիայի հետ միացնելու մասին ոչինչ խօսակցութիւն չը կայ դիպլոմատիական շրջաններում:

—Հռոմի լրագիրները հաղորդում են, որ պապի աղդականին, կոմս կամիլլօ Պէչչիին արդէն խնայ է տրված, որ նա Մոսկվա գնաց է գնայ, որպէս Լևոն XIII պապի ներկայացուցիչ թագաւոր Կայսրի թագադրութեան ժամանակ:

—«Temps» լրագրին Վիէննայից հեռագրում են, մարտի 17-ից, որ Կրիմօշիի կատարելապէս խաղաղվելու մասին լուրերը վաղաժամանակեայ են: Զը նայելով, որ երկիրը զօրքերով գրաված է, պաշտօնական հեռագիրները համարձակ խրաքանչիւր օր նոր կռիւների մասին են հաղորդում: Ապստամբները անտառներումն են մնում:

—«Հավասի» ընկերութեանը մարտի 16-ից հեռագրում են Ցանինից, որ Ցանինի հարաւային մասում զանազան ցեղերի մէջ գրգռմունքը շարունակվում է: Ցեղերից մի քանիսը, որոնք հպատակութիւն յայտնեցին և զէնքերը յետ դարձրին, նորից ապստամբվում են, կամ պատրաստվում են ապստամբվել: Արաբները, որոնք իրանց զէնքերը ֆրանսիական զինուորական իշխանութիւններին յանձնեցին, այժմ, ինչպէս երևում է, զինուորված են Մարտինի հրացաններով, որ Տրիպոլիսից են ստացել:

—Վիէննայի «Presse» լրագրին Բելգրադից հաղորդում են, որ եպիսկոպոս Երմենիմ, նախկին միտրոպոլիտ Միխայիլի կողմնակիցը պաշտօնից կը զրկվի:

—«Allgemeine Zeitung» լրագրին Կարլրուէից հաղորդում են, որ Բադէնի մեծ դքսութեան առևտրական ժողովները ծխախոտի մենաշնորհութեան մտցնելու դէմ ձայն տուին:

—«France» լրագիրը մարտի 3-ից, Բէրնից մէկ հեռագիր է ստացել, որից իմացվում է թէ Շվեյցարիայում անբարոյականութիւն է տիրում, մանաւանդ ժամագործների և ոսկերչագործների գործարանատէրերի մէջ: Վերջինները ժողով կազմեցին Բէլաօզում, Բէրնի կանտոնում, ուր վճռվեցաւ եռանդով բողոքել դաշնակցական ժողովի դէմ, որ նա ընդունել է այդ դաշնագիրը: Մի և նոյնը կատարվեցաւ և Ցիւրիխի արդիւնաբերողների միութիւնում: Ամենքը միաձայն ասում են, որ բարոյական ուշադրութիւն չէ դարձրած շվեյցարական գործարանատէրերի շահերի վրա: Նոյն տեղում մէկ մասնաժողով ընտրվեցաւ, որին յանձնեցին առևտրական դաշնագրի բոլոր հակառակորդներից ժողով կազմել: Այդ ժողովը մարտի 14-ին կը հաւաքվի:

—«Wiener Tag.» լրագիրը Ցանինից ստացված հետևեալ հեռագիրը տպեց, որից իմացվում է, թէ կոմս Սանտիի, ֆրանսիական հիւպատոսութեան քարտուղարի և իտալացիների մէջ կռիւ է ծագել: Ահա հեռագիրը: Անցեալ գիշեր իտալական հիւպատոսի մօտ եկան կոմս Սանտի և ֆրանսիական հիւպատոսարանի քարտուղարը, նրանց ետևից երկու զուաւներ տանում էին մի քանի իտալացիներին: Առաջինները յայտնեցին հիւպատոսին, որ իտալացիք յարձակվեցան նրանց վրա հայհոյանքով և ապառնալիքով: Իտալացիք իրանց կողմից պատմում էին, որ իրանք հանդիստ զբօսնում էին, երբ մօտիկ գտնվող մարդկերանց խմբից մէկ մարդ մօտեցաւ նրանց և սկսեց բղաւել նրանց վրա: Իտալական հիւպատոսը ժամանակաւորապէս բանտարկեց իր հայրենակիցներին, խնդրելով վիրաւորված ֆրանսիացիներից, եթէ նրանք կամենում են գործը սկսել, ներկայացնել իրան օրինական խնդիրը:

—«Soir» լրագրի խօսքերով, մարտի 17-ից, ֆրանսիական և գերմանական կառավարութիւնների միմեանց հետ ունեցած յարաբերութիւնները չատ լաւն են: Իշխան Բիսմարկ հաւատացած է, որ այժմեան ֆրանսիական մինիստրութիւնը չի գցի երկիրը պատերազմական որ և է պատահարի մէջ: Վատնը ծածկված է Աւստրիայի և Ռուսաստանի մէջ եղած յարաբերութիւնների մէջ: Թէպէտ պատերազմի վտանգը, կարծես, հեռացրած է, այնու ամենայնիւ որ և է դէպքը կարող է խանգարել խաղաղութիւնը կենտրոնական Եւրոպայի մէջ:

—«Bassir» լրագիրը դադարեցրեց իր գոյութիւնը: Նա արաբական օրգան էր, որը խմբագրվում էր Փարիզում և սուրբիդիա էր ստանում ֆրանսիական կառավարութիւնից: Նրա նշանակութիւնը կայանում էր պանիսլամիզմին ընդդիմադրելու մէջ, որի գլխաւոր օրգանը «Djeonaib» լրագիրն էր:

—Ս. Պատրիկի օրը իրլանդացիների ազգասիրական ոգևորութիւնը հանդիստ անցաւ: Յուզմունքներ եղան, և բոլոր մեծ քաղաքներում զօրքերի թիւը աւելացրին, բայց ժողովրդական ոգևորութիւնը արտաքինապէս ոչ մի դէպքով չը խանգարվեցաւ: Այդ օրը չատ փառաւոր կերպով ոգևորեցին. տուին զանազան բանկէտներ, կազմեցին կոնցերտներ և պրոցէսիաներ: Ցոնախմբութեանը մասնակցողներից չատերի գլուխների վրա կարելի էր կարդալ, «Կորչին սեփականատէրները» «Ինքնավարութիւն Իրլանդիային», «Թող ազատ լինի Իրլանդիան» և երևում էին ազգասէրների և հողային լիգայի անդամների պատկերները—Պարնէլի, Դիլլոնի, Սկիտոնի և այլոց: Բացի այդ անմեղ ցոյցերից, քաղաքական ոչ մի ցոյց չեղաւ: Դուբլինում հանդստութիւն էր տիրում: Լորդ Կոնէր փոխարքան, և նրա կինը, երևում էին Դուբլինի ամրոցի պատշգամբի վրա և հիացմունքով ընդունվում էին ամբոխից:

—«Daily News» լրագրին Հռոմից հեռագրում են մարտի 17-ից, որ ազատ մտածողների լիգայի մասնաժողովները եռանդով աշխատում են, որ պ. Բրեգլօ ընդունի ազատ մտածողների միջազգային կոնգրէսի մէջ նախագահութիւնը, որը պէտք է գումարվի այս տարվայ աշնանը Հռոմում:

ԹԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պատերազմական ծախսը վճարելու նոր ձև: «Times» լրագրում կարդում ենք հետևեալ սրամիտ զատողութիւնը: Բարօն Ժորժ դէ-Պլանսի, Բերլինի ֆրանսիական դեսպանութեան առաջին քարտուղարը, այս օրերս կը պատկվի բարօն Օպենդէյմերի աղջկայ հետ, որը հարուստ բանկիր է Կէօլնում: Բօմէօ և Ջուլիէտի ժամանակներից քիչ փորձեր չեն եղած հաշտեցնել այդ երկու թշնամի ցեղերին: Բարօն դէ-Պլանսին, ի հարկէ, ամենից յաջող կերպով վճռեց այդ խնդիրը, Ֆրանսիայի համար մէկ զեղեցիկ քաղաքացիական ձեռք բերելով և նրա հետ միասին պատերազմական ծախսի նշանաւոր մասը: Նա դրանով իր համաքաղաքացիներին ցոյց տուեց ամենաճիշդ և խաղաղ միջոցը ազգային կորուստը ուղղելու համար: Եթէ ֆրանսիական հանրապետութիւնը խիստ կերպով կը գործ դնի այդ մեթոդը, այսինքն երիտասարդ մարդկանց Գերմանիա կուղարկի յանձնարարութեամբ պատկվել հարուստ աղջիկների հետ, այն ժամանակ վրէժխնդրութեան ամեն տեսակ ցնորքները կը մոռացվեն: Նորահարսի ազգականներից մէկի տան մէջ եղած հրաւէրքում, դէ-Պլանսի ասեց. «Ես կաշխատեմ վճարել կնոջս այն, ինչ որ ես վերցրեցի Գերմանիայից: Գերմանիան կարող էր ասել. «Ես պարտական եմ Ֆրանսիային, և սկսում եմ պարտքս վճարել սկսելով բարօն դէ-Պլանսիից:»

* * *

«Заря» լրագիրը հաղորդում է, որ այս օրերս Շուլիավկում հետևեալ բռնական անցք պատահեցաւ: Մէկ ջահել տան և եօթ տարեկան օրիորդ սաստիկ սիրահարվեցաւ 19 տարեկան մէկ երիտասարդի վրա, որը ծառայում էր Մարբի ֆոտոգրաֆիական հիմնարկութեան մէջ: Սիրահարները մանկութիւնից միմեանց ճանաչում էին: Անցեալ տարի երիտասարդը ստիպված էր կէս տարով Կիէվից հեռանալ: Այդ ժամանակամիջոցում, ծնողները մարդու տուին աղջկան հակառակ նրա կամքի երկաթուղու վրա ծառայողներից մէկին: Նրան համարեա բռնի կերպով պսակեցին: Սիրահարված երիտասարդը, Զախարի Պետրով, վերադարձաւ Կիէվ: Նրա սիրոյ առարկան յայտնում է նրան, որ չէ սիրում իր մարդուն, և պատրաստ է նրա հետ (Զախարի հետ) աշխարհս միւս ծայրը գնալ: Բայց Պետրով չէ համաձայնվում. նա չէ կամենում իր սիրած աղջկան խայտառակել: Ամուսինը խմացաւ իր կնոջ նախկին սիրոյ մասին, և կասկածելով որ նա յանցաւոր յարաբերութիւններ ունի Պետրովի հետ, դուրս գցեց նրան: Յուսահատելով, Անատասիան վճռեց անձնասպանութիւն գործել: Աղջիկը թոյն ընդունեց և չը նայելով բժշկների ջանքերին, մեռաւ: Նրա մահը սարսափելի տպաւորութիւն գործեց Պետրովի վրա: Սիրած կնոջ դիակից ֆոտոգրաֆիական պատկերը հանելու ժամանակ, երիտասարդը խելագարվեցաւ: Այժմ նա Կիրիլեան հիւանդանոցումն է գտնվում: Նա ուրախ է, ծիծաղում է, երգում է, յանախ յիշում է իր Նաստիային և չէ հաւատում, որ նա մեռել է:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մարտի: Սենատը ոչնչացրեց դատաստանական պալատի վճիռը Տեգլեվի գործի վերաբերութեամբ: Գեներալ Մրօվինսկու և Ֆուրսօվի դանդատները առանց հետևանքի են թողված: Օդէսայից մարտի 20-ին կամաւորների մի խումբ ուղևորվում է Հերցեգովինա: Միլան թագաւորը թագադրութեան ներկայ գտնվելու համար չի գայ Ռուսաստան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 մարտի: „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. ժողովրդական լուսաւորութեան մինիստր Բարօն Նիկոլայ իր խնդիրքի համեմատ արձակված է պաշտօնից, պահելով նախկին կոչումները: Նրա տեղ նշանակված է ստատս-սեկրետար Դելիանով: Բարձրագոյն հրովարտակի մէջ Բարօն Նիկոլայի անունով թագաւոր Կայսրը շնորհակալութիւն է յայտնում է նրա կառավարութեան համար, որ հիմնած էր օրէնքների ճիշդ կատարման վրա: Հրովարտակը ստորագրված է: „Սրտանց երախտապարտ և բարեհաճող Ալէքսանդր:“

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 մարտի: „Голосъ“ լրագիրը հաղորդում, որ օրերումս երգիծաբան Սալտիկով Խարկովի համալսարանի պատուաւոր անդամի կոչման վկայական ստացաւ: „Новое Время“ լրագիրը հաղորդում է, որ մարտի 18-ին խմիչքների նախագիծը ներկայացվեցաւ Պետական խորհուրդին: Պետական խորհուրդի վերջին նիստի ժամանակ ծխախոտի հարցի մասին մինիստրական նախագծին շատ ընդդիմադրութիւններ եղան: Պետական կօնտրոլը ենթադրում է մասնակցել նիւթերի պահեստների քննութեանը և նախապէս հսկողութիւն ունենալ կապալների նախագիծների, պայմանների և աճուրդների վրա: Կրիմշիի մէջ նորից ապստամբներ են հավաքվում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 մարտի: Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 96 ր., երկրորդ 91 ր. 25 կ., երրորդ 91 ր. 50½ կ., չորրորդ 91 ր. 87½ կ., հինգերորդ 90 ր. 37 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 216 ր. 5 կ., երկրորդ 211 ր. 5 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 90 ր. 25 կ., երկրորդ 90 ր., երրորդ 90 ր. 12 կ., ոսկի 8 ր. 13 կ.: Ռուսաց 1 բուբլ Լոնդոնի վրա արժէ 24,25 պենս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 206 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 255 ֆրանկ 25 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՔՆԱՂՈՒՐՈՎԻ ԲԱՆԿԱՅԻ ԿՈՄԱՆԴԱՏՈՒՆ կենթարկի մրցութեան հետեւեալ մատակարարութիւնները՝ 1882 թուականի դեկտեմբերի 4-ին, 1883 թուականի յունուարի 4-ին, մարտի 4-ին եւ մայիսի 4-ին։ Մրցութեան դրամագլուխ՝ 1 տարեկան 7 տոկոսով։ Մրցողներ՝ ամենաբարձր գին առաջարկողներ